ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունիսի 2016թ. թիվ 173-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1061-Ն որոշման պահանջների, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային համակարգող խորհուրդներ և հաստատել նրանց անհատական կազմերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունվարի 8-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին և Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական ծառայությունների տարածքային բաժնին կից սոցիալական աջակցության խորհուրդներ ստեղծելու մասին» թիվ 1-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունիսի 7
ք.Վանաձոր